ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2298-Ա «20» հունիսի 2024 թ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ՌԵՆՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուարդ Մարությանի դիմումը՝ արտադրական շենքը հասարակականի վերակառուցման համար նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) տրամադրման և անհրաժեշտության դեպքում Փ.Բուզանդի փողոցի հ.5 և Հանրապետության հրապարակի ՏԵ-1775, ԲԵ-147 էլ. ենթակայանների զբաղեցրած հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17082020-01-0174 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 01.10.2002թ. հ.669198 վկայականները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանի կողմից 08.05.2023թ. հ.08-ԿՀ-09/972 գրությամբ տրամադրված համաձայնությունը, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ 24.06.2022թ. հ.01/43988-22 տեղեկանքը:

Քննարկվող հողամասերն ընդգրկված չեն ՀՀ օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցման սխեմայի գտնվում են 1-ին գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 6-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 12-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշումը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.05.2024թ. հ.Դ-61331-24 եզրակացությունը և 30.05.2024թ. հ.Դ-61331-24 գրությունը.

1. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ Փ.Բուզանդի փողոցի հ.5 և Հանրապետության հրապարակի ՏԵ-1775, ԲԵ-147 էլ. ենթակայանների զբաղեցրած համապատասխանաբար՝ 181.0քմ և 248.0քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները (կատեգորիան) սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունները (օգտագործման նպատակը)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հասարակական կառուցապատման:

2. Փ.Բուզանդի փողոցի հ.5 և Հանրապետության հրապարակի ՏԵ-1775, ԲԵ-147 էլ. ենթակայանների զբաղեցրած հողամասերի նկատմամբ փոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, համաձայն կից ներկայացվող արտադրական շենքը հասարակականի վերակառուցման նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի):

3. Որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության և անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ